## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**/2-րդ հանրային լսման/**

**«ԳՐԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Կողեսի գաբրոսիենիտների հանքավայրի «ԳՐԱՆԱՐՄ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ**

Կողես բնակավայր «26» նոյեմբերի 2025թ.

Կազմակերպված երկրորդ հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը:
- Լոռու մարզի Կողես բնակավայրի վարչական ղեկավար Ա. Մամաջանյանը:
- «ԳՐԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Ազատյանը, ներկայացուցիչ Ա.Անտոնյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (03.05.2024թ., այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով՝ 2025թ. նոյեմբերի 26-ին ժամը 12:00-ին Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ԳՐԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Կողեսի գաբրոսիենիտների հանքավայրի «ԳՐԱՆԱՐՄ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվում է իրականացնել Կողեսի գաբրոսիենիտների հանքավայրի «ԳՐԱՆԱՐՄ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Վերոգրյալի հիման վրա՝ Օրենքով և Որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ 2025 թվականի մարտի 3-ին, ժամը 12:00-ին Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացել է նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Այդ լսման արդյունքում 2025 թվականի ապրիլի 11-ի N 29-Ա որոշմամբ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանին «ԳՐԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Կողեսի գաբրոսիենիտների հանքավայրի «ԳՐԱՆԱՐՄ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը տրամադրել է իր նախնական համաձայնությունը:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության

վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, Օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային երկրորդ լսումներ:

Հ. Մեսրոպյանը նշեց, որ երկրորդ հանրային լսման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և Որոշման պահանջներին համապատասխան, սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթի 2025 թվականի նոյեմբերի 6-ի համարում, հայտարարությունը տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

Հաջորդիվ՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Հովիկ Մեսրոպյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, նշելով որ տարածքը խորհրդային տարիներից խախտված է եղել:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցավ Լոռու մարզի Կողես բնակավայրի վարչական ղեկավար Ա. Մամաջանյանը:

Հանրային լսման ընթացքում ելույթ ունեցավ նաև «ԳՐԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա.Անտոնյանը, մանրամասն ներկայացնելով երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը:

«ԳՐԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ մասնակիցների կողմից եղան հարցադրումներ: Հարցադրմանը տրվեց սպառիչ պատասխաններ:

Հարցուպատասխանին հաջորդեց ընդհանուր բնույթի քննարկում՝ որից հետո հանրային լսման պատասխանատուն արձանագրեց, որ բարձրացված հարցադրումներին տրվեցին սպառիչ պատասխաններ: Հանրային լսման մասնակիցները տվեցին իրենց համաձայնությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրային լսման պատասխանատուն ամփոփեց և փակեց հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան

«ԳՐԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Արտակ Անտոնյան